ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 74-Լ

«10» 09 2024թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի վարորդ-ցրիչի 1 թափուր հաստիքը կրճատելու և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնականի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ հավելվածի 4-րդ բաժնի 51-րդ գլխի 199-րդ կետի «Վարորդ-ցրիչ 1» բառերը փոխարինել «Վարորդ-ցրիչ 0», նույն գլխի «Ընդամենը 1» բառերը՝ «Ընդամենը 0», իսկ «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում՝ 4**» բառերը՝ «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում՝ 3**» բառերով,

2) 2-րդ հավելվածի 4-րդ բաժնի 52-րդ գլխի «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում* 52**» բառերը փոխարինել

«***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում*** **51**» բառերով,

3) 2-րդ հավելվածի 5-րդ բաժնի «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում*** **52**» բառերը փոխարինել «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում*** **51**» բառերով, իսկ «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում*** **300**» բառերը՝ «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում*** **299**» բառերով,

4) 3-րդ հավելվածի 3-րդ կետում՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 4» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 5» բառերով, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ 14***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ 15***» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**